Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐՎԱԾ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 4. Հիմնական հասկացությունները

15) **լիցենզավորված անձ՝** սույն օրենքի համաձայն լիցենզիա ստացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ.

15.1) իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ բովանդակող բաղվածք՝ իրական սեփականատերերի հայտարարագրի կամ իրական սեփականատերերի վերաբերյալ փոփոխված տեղեկությունների վերաբերյալ բաղվածք Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանից. Քաղվածքում ներկայացվում են, նաև էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության, ջերմային էներգիայի արտադրության կամ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության լիցենզիա ստանալու համար դիմող իրավաբանական անձի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում 10 տոկոսից ավելի մասնաբաժին ունեցող անձանց վերաբերյալ տեղեկությունները.

Հոդված 24. Գործունեության լիցենզիա ստանալու պայմանները

1. Գործունեության լիցենզիա ստանալու համար հանձնաժողով ներկայացվող փաստաթղթերի ցանկը և ձևերը սահմանում է հանձնաժողովը:

2. *(մասն ուժը կորցրել է 07.02.18 ՀՕ-100-Ն)*

2.1 Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված փաստաթղթերի հետ մեկտեղ էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության, ջերմային էներգիայի արտադրության կամ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության լիցենզիայի համար դիմողը ներկայացնում է իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ բովանդակող բաղվածք՝ դիմումը ներկայացնելուն նախորդող 5 օրվա դրությամբ.

3. Գործունեության լիցենզիա ստանալու վերաբերյալ հայտի քննարկման և գործունեության լիցենզիայի տրման կարգն ու պայմանները սահմանում է հանձնաժողովը:

4. Սկսած դիմողի կողմից բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը հանձնաժողով ներկայացնելու պահից՝ հանձնաժողովը սահմանված ժամկետում, որի տևողությունը չպետք է գերազանցի 80 աշխատանքային օրը (փոքր հիդրոէլեկտրակայանների և էներգիայի վերականգնվող այլ աղբյուրների կիրառմամբ գործող կայանների դեպքում՝ 25 աշխատանքային օրը), քննարկում է լիցենզիա ստանալու վերաբերյալ դիմումը և ընդունում համապատասխան որոշում:

5. *(մասն ուժը կորցրել է 07.02.18 ՀՕ-100-Ն)*

(24-րդ հոդվածը փոփ. 19.06.13 ՀՕ-86-Ն, 07.02.18 ՀՕ-100-Ն)

Հոդված 28. Գործունեության լիցենզիա ունեցող անձի պարտականությունները

1. Գործունեության լիցենզիա ունեցող անձը պարտավոր է՝

ա) իր գործունեությունն իրականացնել սույն օրենքին, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, այլ իրավական ակտերին, հանձնաժողովի ընդունած իրավական ակտերին ու գործունեության լիցենզիայում նախատեսված պայմաններին համապատասխան.

բ) *(ենթակետն ուժը կորցրել է 07.02.18 ՀՕ-100-Ն)*

գ)*(ենթակետն ուժը կորցրել է 07.02.18 ՀՕ-100-Ն)*

դ) *(ենթակետն ուժը կորցրել է 07.02.18 ՀՕ-100-Ն)*

ե) ապահովել լիցենզավորված գործունեության մեջ ներգրավված շենքերի, շինությունների, ինժեներական կառույցների էներգատեղակայանքների և գծերի մատչելիությունը հանձնաժողովի և օրենքով սահմանված այլ մարմինների ներկայացուցիչների համար.

զ) *(ենթակետն ուժը կորցրել է 07.02.18 ՀՕ-100-Ն)*

է) լիցենզիայի պայմաններին համապատասխան իրականացնել տեխնիկական (ներառյալ՝ տեխնոլոգիական կորուստների, վառելիքի տեսակարար ծախսի, սեփական կարիքների համար անհրաժեշտ էներգիայի կամ բնական գազի ծախսի և այլն) և (կամ) ֆինանսական աուդիտ՝ անկախ փորձագետների ներգրավմամբ.

ը) սահմանված կարգով հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացնել ներդրումային ծրագրերը՝ ապագա սակագներում ներդրումների ամբողջական կամ մասնակի ներառման կամ մերժման նպատակով.

թ) հանձնաժողովի հաստատմանը ներկայացնել տեխնոլոգիական անխուսափելի կորուստների, վառելիքի տեսակարար ծախսերի, սեփական կարիքների համար օգտագործվող էներգիայի, բնական գազի և սակագնի տարր կազմող այլ մեծությունների հաշվարկման մեթոդիկաները.

ժ) իրականացնել սույն օրենքով ամրագրված մյուս պարտավորությունները:

2. Լիցենզավորված անձի կողմից իրականացվող տնտեսական այլ գործունեությունը պետք է վարվի լիցենզավորված գործունեությունից առանձին՝ առանձնացված հաշվառմամբ, և չպետք է վտանգի լիցենզիայի պայմանների պատշաճ կատարումը:

<u>3. Էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության, ջերմային էներգիայի արտադրության կամ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության լիցենզիա ունեցող անձը «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքով սահմանված ժամկետում իրականացնում է իրական սեփականատերերի գրանցում և լիազոր մարմին է ներկայացնում իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ բովանդակող քաղվածք, ինչպես նաև «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքով սահմանված կարգով և ժամկետում իրական սեփականատիրոջ փոփոխության պետական գրանցումից հետո 14 օրվա ընթացքում փոփոխության մասին տեղեկացնում է լիազոր մարմնին՝ ներկայացնելով իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ բովանդակող քաղվածք:</u>

(28-րդ հոդվածը փոփ., խմբ., լրաց. 07.02.18 ՀՕ-100-Ն)

Հոդված 30.1 Գործունեության լիցենզիայի կասեցումը և դադարեցումը

1. Լիցենզավորված անձի գործունեության լիցենզիան կարող է կասեցվել «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, սույն օրենքով կամ այլ օրենքներով նախատեսված դեպքերում, ինչպես նաև էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ունեցող անձի՝ տվյալ կայանի համար տրամադրված ջրօգտագործման թույլտվությունը ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնի կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած ակտի հիման վրա կասեցվելու դեպքում:

<u>1.1. լիցենզավորված անձի լիցենզիան կասեցվում է, եթե բացահայտման օրվանից հետո 10-օրյա ժամկետում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության, ջերմային էներգիայի արտադրության կամ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության լիցենզավորված անձը չի ներկայացրել սույն օրենքի 24-ր հոդվածի 2.1-ին մասով պահանջվող իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ բովանդակող քաղվածք:</u>

2. Լիցենզավորված անձի գործունեության լիցենզիան կարող է դադարեցվել «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, սույն օրենքով կամ այլ օրենքներով, ինչպես նաև հետևյալ դեպքերում.

ա) արտադրության լիցենզիա ունեցող անձը լիցենզիայով սահմանված կառուցման ժամանակահատվածում չի ավարտել կայանի կառուցման աշխատանքները, հանձնաժողովի սահմանած կարգով չի դիմել լիցենզիայի պայմաններում փոփոխություններ կատարելու համար, կամ հանձնաժողովը մերժել է փոփոխություններ կատարելու դիմումը, և արտադրության լիցենզիա ունեցող անձը մինչև կառուցման ժամանակահատվածի ավարտը չի վերացրել մերժման հիմքերը և հանձնաժողով չի ներկայացրել համապատասխան հիմնավորող փաստաթղթեր.

բ) արտադրության լիցենզիա ունեցող անձը լիցենզիայով սահմանված կառուցման ժամանակահատվածում չի ավարտել կայանի կառուցման աշխատանքները, հանձնաժողովի սահմանած կարգով չի դիմել լիցենզիայով սահմանված կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու հայտով, կամ հանձնաժողովը մերժել է ներկայացված հայտը, և արտադրության լիցենզիա ունեցող անձը մինչև կառուցման ժամանակահատվածի ավարտը չի վերացրել մերժման հիմքերը և հանձնաժողով չի ներկայացրել համապատասխան հիմնավորող փաստաթղթեր.

գ) արտադրության լիցենզիայով ամրագրված կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածում հանձնաժողովը կասեցրել է արտադրության լիցենզիան, և արտադրության լիցենզիա ունեցող անձը մինչև կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածի ավարտը չի վերացրել արտադրության լիցենզիայի կասեցման համար հիմք հանդիսացած խախտումը, հանձնաժողով չի ներկայացրել համապատասխան հիմնավորող փաստաթղթեր, և հանձնաժողովը չի վերացրել արտադրության լիցենզիայի կասեցումը.

դ) էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ունեցող անձի՝ տվյալ կայանի համար տրամադրված ջրօգտագործման թույլտվությունն ուժը կորցրած ճանաչվելու կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ջրօգտագործման թույլտվության գործողության ժամկետը չերկարաձգվելու դեպքում՝ ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնի կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած ակտի հիման վրա:

<u>ե) սույն հոդվածի 1.1-ին խախտումը մեկ տարվա ընթացքում կրկին թույլ տալու դեպքում:</u>

(30.1-ին հոդվածը լրաց. 07.02.18 ՀՕ-100-Ն)

<u>Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ</u>

<u>1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի մարտի 1-ից:</u>

<u>2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո սույն օրենքի իմաստով էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության, ջերմային էներգիայի արտադրության կամ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության լիցենզիա ունեցող անձինք իրական սեփականատերերի վերաբերյալ առաջին հայտարարագիրը պետական ռեգիստր են ներկայացնում ոչ ուշ, քան մինչեւ 2020 թվականի հուլիսի 1-ը:</u>

<u>3. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության, ջերմային էներգիայի արտադրության կամ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության լիցենզիա ստացած անձինք պարտավոր են իրական սեփականատերերի վերբերյալ տեղեկություններ բովանդակող բաղվածքը հանձնաժողով են ներկայացնում եռամսյա ժամկետում:</u>